

ԵՂԵԳՈՒՆ ՓՈՂ

3-4 (113-114) մարտ-ապրիլ, 2016



ՀՐԱՉԱ ՍԱՐՈՒՍԱՆ

Նա Բառի զինվոր էր...
Նրա կոհիվը Բառի հետ էր ու Բառի համար...
Նա հարզում էր Բառը, ինչպես հակառակորդին են հարզում, ու սիրում էր Բառը: Երբ այն չէր հերիքում, այնքան էր սիրում, մինչև նոր Բառի ծնունդը:
Նա բառա-ստեղծ էր...
Նա բանա-ստեղծ էր...

Նրա բանաստեղծությունը կարող է ճախրել շուրթից շուրթ, տեղավորվել հոգուց հոգի, հաղթել սերնդից սերունդ...
Նրան սիրում էին չճանաչելով, սիրում էին ծանոթ լինելով, սիրում էին խորապես ճանաչելով...
Նա Բառի խրամատ փորողն էր, Բառի զինվորն ու Բառի հրամանատարը:
...Եվ ահա, ապրիլյան այս տխուր ու հպարտ օրերին Բառի զինվորն ու Բառի հրամանատարը բանաստեղծության խրամատներից գնում է դեպի երկնքի խրամատներ...
Գնում է ծափահարություններով...

Անդրանիկ Կարապետյան

ԾԱՈՒ ԵՄ ԶԳՐՎԱԾ ԱՅՆ ԵՐԳԻՆ...

Ինչքան էլ մտմտաս անքերի, Բառերը սրինգ չեն կամ քնար. Կցնդես ու չես էլ պատկերի Վաղորդյան գեղզեղանքն անհնար,-
խորհում են կիսանինջ, և դարձյալ Դայլայլ է, ճովողուն, ծլվկոց, Սևեռուն սույլ ու կանջ, ո՛վ Բարձր-յալ,-
Վեր կենամ ու բացեմ դուռս զոց...

Բաց անեն փեղկեր ու վարագույր, Ձանց անեն կերպարս կարկամած,
Ընկելով ձայնառու զույն ու բույր՝ Դարծ անեն և ուշքի գամ կանաց...

Ու գրվի վերջապես. «Ո՛վ Բարձր-յալ, Ճառա եմ չգրված այն երգին, Որ կուզեր վերստին ու դարձյալ Կտու գնալ թռչնածայն համերգին»:

Քամիներն ու ես

Մոլորվել է քամին իմ ականջում, Մոլորվել ու մեկին կանջում է ու կանջում,
Իսկ այդ մեկը չկա,-
Մոլորվել է գուցե այլ ականջում: Ու կանջում եմ ես քեզ, ես էլ քեզ եմ կանջում...
Մոլորվել է ծայրն իմ քամիների կանջում:

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Անետին

Տերևների տակ թող սերը քնի: Մոմերը հալվեն կաթիլ առ կաթիլ: Մի քիչ հաց լիներ ու մի քիչ գինի...
Ատի՛ր, խնդրում եմ, շուրթերս ատիր:

Լուսինն այս գիշեր ազգավ կդառնա: Աստղերը՝ մոռի փայլիլուն հա-

տիկ: խղճմտանքներիդ հաշիվը խառնած-

Ատի՛ր, խնդրում եմ, աչքերս ատիր:

Թող այս գիշեր էլ սրբերն ինձ խաբեն: Սատանան հառնի երկնքի պատին: Աղոթագրքի մրու՛րը լափեմ...

Ատի՛ր, խնդրում եմ, մեղքերս ատիր:

Թող զուգավորվեն ժպիտով ցիմիկ Ստույգ դժոխքն ու դրախտը պատիր: Մի քիչ հաց լիներ ու մի քիչ գինի...

Ատի՛ր, խնդրում եմ, աղոթքս ատիր:



ԳԻՇԱՍՎԻ ԽՈՒՔ ՍԱՐԻՏԵ ԿՈՆՏՐԻՍԱՅՏԵԻՆ

Լիտվացի գրող, բանաստեղծուհի, հայագետ Սարիտե Կոնտրիսայտե, կարելի է ասել, Հա-

յաստանի մշակութային դեպքան էր Լիտվայում: Ընդգրկում էր նրա գործունեության ծիրը, որը վկայում է հայ եւ լիտվացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, հոգեմկարագրի ու մտախառնվածքի ընդհանրությունը:
Ապագայի լավագույն երագանքները Սարիտեին բերեցին Հայաստան: 1971թ. Լիտվայի գրողների միությունից նրան առաջարկում են ուսումնասիրել ԽՍՀՄ տարածքում ապրող ազգերի լեզուներից մեկը: Սարիտեն առաջը երկմտելու ընտրում է հայերենը: Գալիս է Հայաստան, որ-

տեղ եւ նրան ճակատագրված էր համդիպել ապագա ամուսնուն՝ հասարակական-քաղաքական գործիչ Ռուսլան Հարությունյանին: Այնուհետ նրա ընդվզումն ու պայքարը հայի համար էր, հայերենի ու Հայաստանի:
Հայոց լեզվի, նաեւ գրաբարի հմուտ իմացությունը Սարիտեին ոգեշնչել է այնքան, որ նա լիտվերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Մայաթ-Նովայի, Ե. Չաբենցի, Ս. Խանգադյանի, Հ. Մաթեոսյանի, Գ. Եմինի, Պ. Սեւակի, Գ. Հովհաննեսի, Հ. Գրիգորյանի, Վ. Գրիգորյանի, Է. Միլիտոյանի եւ այլոց

ստեղծագործությունները: Սարիտե Կոնտրիսայտե 1992թ. հիմնում է «Լիտվա-Հայաստան» ընկերությունը, որի շնորհիվ կազմակերպում եւ իրականացնում է բարեգործական օգնություն Արցախին:
Ըստ եւթյան, նա դառնում է հայ ժողովրդի պաշտպանն ու շատագույր: Հայերի համար ամենաճակատագրական օրերին նա մեր կողքին էր:
Երախտապարտ Գյումրին համամարդկային խնդրներով ու հայի ճակատագրով ապրող Սարիտե Կոնտրիսայտեին 2015թ. շնորհեց «Գյումրու

երախտավոր» տիտղոսը՝ 1988թ. աղետալի երկրաշարժից հետո Գյումրի քաղաքի եւ նրա բնակիչների հանդեպ դրսևերած սրտացավ վերաբերմունքի, ցուցաբերած բարոյական եւ նյութական մեծ օգնության ու հոգևոր աջակցության համար:
Սեֆ օլուխ եմք խոնարհում մեծ մարդու, մեծ մտավորակնի ու մեծ հայագետի հիշատակի առջեւ:

ՀԳՍ Շիրազի մարզային բաժանմունք
«Եղեգան փող» թերթի խմբագրակազմ

ԳՎԳԿ ՍԱՐՈՒՍԱՆ

AKM-74 ԻՆՔՆԱԶԻԳԻ ԵՐԳԸ

Ամենի խորխորատներ կան Կյանքի և մահվան միջև: Ես չափում եմ դրանք Կույր, Թափառական, Դեպի թիրախը սլացող Իմ լուսածիր գնդակի կորագծով: Հե՛յ, Ամենի անդունդներ կան գիշերներում: Հուզվում եմ, շիկացած է իմ փողը: Վառողից վառվելով վառ, Գագի մեջ Հագում, Թափուում, Դողում է գիշերը: Ահա՛ այսօրվա իմ տերը, Որ գրկել, փարվել է ինձ, Անհամբեր է: Եվ փակադնակս դրել է Ավտոմատ վիճակի: Եվ միայնակ է, Մնացել է մեռակ: Եվ ահեղ այս մարտում ընկել է իր ընկերը: Հուզվում եմ, շիկացած է իմ փողը: Իսկ նա՛

Իմ տերը, Իմ զինվորը խոժոռ է: Եվ փոխում է կրկին պահուճակ: Եվ կրկին ձգում է ձգանս ծիգ: Փամփուշտը, Փամփուշտը քիչ է, բարեկամս, Մի՛թե դու էլ, Դու էլ ես գոհվելու: Հե՛յ, Տես ինչ հեռու է, Դեռ հեռու է այն գագաթը, Որտեղ բուրում է ցնորքի մեջ ուրցը, Որտեղ աճում է ապահով պատրանքը: Փամփուշտը, Փամփուշտը խնայիր, բարեկամս, Իմ փողը շիկացած է, Իմ փողի մեջ դիրտ է ու մուր: Բայց, տե՛ս, տե՛ս, հավարի միջով, խավարի պես Դեռ սողում է ոսոխը, Կրակի՛ր, խփի՛ր, գարկի՛ր, Թող սատկի խավարը: Եվ նա՛ Իմ տերը Իմ զինվորը սեղմում է, Ցավցնում է իմ ձգանը: Եվ իմ կողք, Որը սեղմված և ծուլված է ասես իր ուսին, Անզգա և ուշաբափ է արդեն:

Բայց ես դեռ զգում եմ Անզգորեն իրեն, Կարողմ եմ իր միտքը Նույնամուտ եմ իր հետ: Նա գիտի, Որ սվինն իմ դեռ սուր է: Նա գիտի, Որ ձեռնամարտում վերջին ես հաստատ չեմ լքելու իրեն: Եվ նա՛ Իմ ասյուրվա մահատակը՝ Իմ զինվորը կորովի, Համբուրում է իմ խզակորը, Համբուրում է Անունները իմ գոհված տերերի, Անունները, Որ փորված են իմ սվինով իմ կրթին: Եվ նետվում է, Նետվում է, Նետվում է իմ տերը մի վերջին գրոհի: Եվ սվինն իմ շողում է Ցղլբերում անտարբեր լուսնի: Եվ իմ մարմնի ազնիվ պողպատը ես զգում եմ արյան մեջ Իմ վերջին զինվորի, Իսկ հեռվում՝ հեռավոր այն դիղբերում, Դեռ բուրում է ցնորքի մեջ ուրցը, Դեռ աճում է պատրանքը՝ Վճիռը լացող Աստծո:

Հե՛յ, Դեռ աճում է պատրանքը Սրտանճիկն ու հաղթական կռվի:

ՍԿԱՆԱՊԱՏ ԴԱՇՏԸ

Ավանապատ դաշտեր՝ մահվան վիհեր, Հոգին կանցնի հաստատ, մարմինը՝ չէ: Գուցե հավատամ ես բախտին մի հեղ, Թե մարմինը կանցնի, իսկ հոգին՝ հեջ: Կանխագույր երկինքը թռչունի պես, Տե՛ր, ինչպես ցավը սրտից նետվող՝ Այդպես էլ ահը թև չունի, տե՛ս, Սուսկ սեղմում է հոգին՝ երկինք միտվող: Կերպափոխել ցավը ու ահից վեր Դատկերները գգալ հերոսական, Ուր բեկվում է մահը, և խիղճն ավեր թաղվում է կործան տակ որպես սական: Ո՛ր է ընդվզումը՝ պայծառ ոգին, Եթե հիշել նրան, ապա ցնծալ: Երկինքներում լինել, նրա կողքին, Արտասուքը սրբել հար ու դարձյալ: Ավանապատ դաշտեր՝ մահվան վիհեր, Լարեր ձգված գիշերվա փակ կուպից: Մի առավոտ հետո սուր սվիններ, Մութ սվիններ կելնեն հոգու միջից, Հոգու միջից կելնեն մարմինն ի վեր:



ՄԵՆՔ ԱՊՐԵԼՈՒ ԵՆՔ...

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր ժամանակակից դասականներից թերևս Չամբայանն ամենաբազատեղյակն էր Ղարաբաղյան խնդրին: 20 տարի ապրելով Բաքվում, աշխատակցելով հայկական պարբերականներին ծանոթ էր Ղարաբաղ-ցու կյանքի մանրամասներին, Աղրբեջանի իշխանությունների վերաբերմունքին, և ամեն անգամ վրդովվում էր, երբ խոսք էր լինում Ղարաբաղը Աղրբեջանին բռնակցելու տխրահռչակ իրողության և նրա դժնի հետևանքների մասին: //Մեզ առում են- Ղուք մերը չեք, //Մինչև անգամ դուք ձերը չեք, //Ձեր տեղը չեք, մեր տեղը չեք, //Ղուք տեղը չեք մեր երդերի, //Տանարների ու բերդերի: // Մեզ մեր ցավն են թողնում մենակ... // Սահյանը միշտ էլ այդ հարցի վերաբերյալ ուներ իր հստակ վերաբերմունքը, որն էլ նոր ծիրեր տվեց ազգային գարթների, Հայաստանի անկախության հռչակման և Ղարաբաղյան պատերազմի ժամանակահատվածում: Դեռ 1988 թվականից առաջ էլ, մինչև համաժողովրդական շարժումը, քաղաքականության մեջ չխորացող բանաստեղծին մտահոգում էր Արցախի ճակատագիրը, սակայն, համազգային շարժման պիքի զորանալուն զուգընթաց, նրա հոգում հզոր տեղաշարժեր նկատվեցին, և Արցախյան հարցի հայանպաստ վերջաբանի տեսլականը կյանքի խաչադրվեցին իմաստաքան, 7 տասնամյակը վաղուց հատած բանաստեղծին հույսի կերտն թվաց: //Տղերք կան պինդ, պնդակուռ...//Ում տեսնես մի Սասնա ծուռ...//...Հոգնած ու խնամ էինք, //Խաբված ու քնած էին, //Արթնացանք, էլ քուն չուցանեք: // Այս ոգևորությունն էր պատճառներից մեկը, որի արդյունքում, դեռ 1989 թվականին ամերիկյան ելուստները մեկուսի Հայաստանի անկախությունը «կախաղանի սյուն» համարող Սահյանը, մի օր էլ փորձեց օպերային բատրոնի հարթակից խոսել հարազատ ժողովրդի հետ: Սակայն, նախ ապեջ, իսկ հետո հիասթափություն ապրեց այն բանից, որ հավաքվածները չէին բռն իրեն, իսկ ավելի ծիշտ ամբողջած ժողովրդին ինքը ոչինչ ասել չէր կարող: Ժողովուրդ մեկնել իրականությունը բանաստեղծն իր համար բացահայտում է. «ժողովուրդն

ավելի շատ իր պաշտամունքն է պաշտում, բան այդ պաշտամունքի առարկա Արցախը»: Նույն շփոթությունն ու հուզումնալից էին, որ հանճարեղ, բայց տվյալ պարագայում միանիտ բանաստեղծին, էկրանի այն կողմից ժողովրդին դիմելու նոր ընտրությունների համար կողմնորոշելու հարկադրանքն ունեցան: Սթափվելուց հետո պիտի մարգարեանար երկրի ապագայի հեռանկարը սարսափով կամխազգայու ցավից: //Փնտրեցինք տաք մի հովիտ...// Եկանք ու դեռ առանց ցրտին...// Եվ հիմա ես ի՞նչ ասեմ...// Իմ խաբված ու խաչված սրտին: // Այս անսովոր իրադարձությունների արձագանքն են բանաստեղծի վերջին «Ինձ բացահայտեցին հեռու/Այս բանձնաբախտ մշուշն օրհասի...// Ի՞նչ է լինելու, պարոն Սատանա...// Ես ի՞նչ իմանամ, սատանան գիտի: Իրև խորաթափանց արվեստագետ Սահյանը տեսնում էր, որ երկար սպասված անկախությունն իր հետ բերել էր նաև անցանկալի երևույթներ, որոնք մեղախելու դեպքում կարող էին երկրի ու ժողովրդի համար աղետալի հետևանքներ ունենալ: //Գնանք օտարի դռները բախենք, //Թերմացքներ մուրանք, որ սովը թաղենք...//Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի// Այս անկախության պարանով կախենք: // Չամբայանը, բանաստեղծ լինելուց զատ, նաև իր երկրի շարքային քաղաքացին էր և իր ուսերին ու սրտին զգում էր օրերի ծանրությունը, դժգոհում դրանից, սակայն հիասթափության այս շեշտերը որպես պահի անցողիկ անակնկալների հետևանք, նրա կենսասեր խառնվածքին ու բանաստեղծական հավատամքին թույլ տվեցին, որ խաթարվեր հավատը գալիք երանելի ժամանակների հանդեպ: Սահյանը թվականի իր հունվարին կանխորոշելով շնորհավորանքներ ուղղեցին նկատում է. «Վերջին երկու տարին շատ բան խլեց մեզանից, բայց, փառք Աստծո, տվածը խաթածից շատ է: Մենք սկսեցինք մեզ ճանաչել, մեր ուժին ու մեր

անդրությանը հավատալ»: Ինքն իրեն երբեք չկեղծող բանաստեղծը ոգևորված էր Հայաստանի անկախության հռչակվածը, վերջապես իրականացել էր ողջ ազգի երկար ու ծիգ դարերի երազանքը: Բանաստեղծը պատվիրում է ջրնրկել ցրտի ու սովի չարագույժ աղետի առջև, //Այս սնվելու հույսի մեղր ու կարագով, որպեսզի մեր խորխոր երբի դեմ չքվի ցրտի, սովի, թուրքի դաշինքը: //Վտաբանանք մեր սրտի կրակով, //Կրքի պաշարով դեռ հանդուրժելի: //Արցախ կտանենք մեր վրձնե արյան, // Օրերի ոգին մեր փետրվարյան: //Կմերժենք անլուր այցը հաճույքի, //Սպառնալիքը կհեզենք թուրքի: // Արցախյան պատերազմի հարթակների ու հատկապես Շուշիի գաղտնագրման ցնձուքները ուղղակի կենդանություն էին պարզում արդեն հիվանդ ու աշխարհի հետ իր պարտքերը վաղուց մարած բանաստեղծին: «Ուժս մերեր, կուլի դաշտ կիցնեի գեները: Լացս գալիս է, որ քահել չեմ, որ կարողանամ իմաստ տալ ոչ այնքան կյանքին, որքան մահիս»: Չամբայանի ամենահամարձակ ու հեռահար մտքի արտահայտություններից է «Մի արյուր կա Գյուլստանում» բանաստեղծությունը: Իր ժամանակակից Բաֆֆին Ռաֆայել Պատկանյանը «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը որակեց «հայրենասիրական քնարերգության թագուհի», այսօր Չամբայանի վերը նշված բանաստեղծությունն առանց վարանելու կարող էր քան համարել Արցախյան պատերազմի, հայոց նորոգյա զարթոնքի ու հաղթանակների արթապան, որի թագադրումը շատ չի ուշանալու: Բանաստեղծությունը մի գողտրիկ գուրջ է հայոց պատմական Գյուլստանի (այժմ Շահումյան, որը Հայաստան-Աղրբեջան սահմանի շեղք գտնում է) գերված արքային ու հայրենասեր բանաստեղծի միջև: Սև սատանի բաժին դառած, զուլալ ջուրը լեղի կտրած Գյուլստանի գերի աղբյուրը պատվիրում է հայոց բանաստեղծին: //Աչքը, անկ, ուր էլ գնաս...// Հեռվից-հեռու պահես վրաս:// Իսկ Գյուլստանյան ամենահավանք ջրին պատկալ բանաստեղծը հոգու խորքում հավատում է արյու-

րի երազանքին. // Աչքալուսանք կտանք շուտով// Ես ցուրտ, իսկ դու տաք շուտով: // Չհավատալու պատճառ չունենք, որ հանճարեղ բանաստեղծի այս երազանքն էլ է ի կատար անվելու: // Աստված իջել Գյուլստանում, //Մեր հին օրն է մեզ խոստանում, // իսկ առայժմ Գյուլստանի գերված արքայուր, որի «կարոտը մարդ կապանի», // Կանչում ու չի հանգստանում: Բանաստեղծը գերված ժողովրդի տառապանքն առավել ընդգծելու համար շնչավորել է հայրենի արքայուր: Ավելի համոզիչ ու կենդանի, հուզիչ ու սրտառույթ հնարավոր չէր արտահայտել հայրենասիրական խոսքը, քան ստեղծման օրից ի վեր հայ ժողովրդի համար սրբացված ու հզորությունն առաքող հայրենի ջրի կերպարով: Չետաքրքիր հեռագրագրություն ու շատ քաղաքագետներից առավել խորաթափանց միտք ունի բանաստեղծ Սահյանը: // Եվ կրկնվում է պատմությունն էլի, //Եվ մենակ ես դու վայրի ցեղերի// Պղտոր հեղեղի հորձանքների դեմ...// Մութ, անակնկալ փորձանքների դեմ...// Մեկ է, քեզ պիտի հավատով դիմես...// Հավատով, որ կաս ու պիտի լինես...// Պատմությունն իրը կրկնվում է, անցյալ դարի 90-ական թվականների և դրան էլ նախորդող պատմական դեպքերն ու հայրենի ճակատագրեր ժամանակների շարունակական հողվույթում կրկին դարձել է գերխնդիր: Նորից բախում մի ցեղ փորձում է մեզ խլել մեզանից, իսկ աշխարհի «մեր հույս» պետությունները դիտվ փորձում են մեղքեր փնտրել մեր մեջ: // Մեզանից ի՞նչ են ուզում, // Միայն մենք ու՞մ ենք վնասել, // Եղբայրներ շատ ունեցին, //Ինչու՞ ենք մենակ մնացել...// Բանաստեղծի բնորոշմամբ «Սասնա ծուռ Հայաստանը» կրկին համախմբվել է, ցավոք, այս անգամ էլ ժողովրդի համար օրհասական լինել-չլինելու ճակատագրական պահին, և պատրաստ է, անգամ որդիների արյան գնով հաղթանակ տանել: //Վաչկատուններն դուք մերօրյա, //Թող մտտ չգան խաչները ձեր, //Դեռ են գլխից դրախտավայր, //Դրախտի դուռ Հայաստանին: // Թագի //Խանձմարուր էլ դեռ չունեիր, // Երբ

ծանոթ էր աշխարհն արար// Մետրոպի լույս, Ղևնդի խաչ: // Վարդանի թուր Հայաստանին: // Վաղուց թվում է, թե փոխվել են ռուս-հայկական անցյալ դարի 90-ական թվականների հարաբերությունները, և մենք հայերս, կրկին մերել ենք ու «մոռացնելու տվել» անցյալի տխուր իրողությունները, սակայն Սահյանի քաղաքական սրբափ մեկնությունն ու հարցի ճշմարիտ բացահայտումը, կարծես արված են մեր օրերի հեռավորությունից: «Վերջապես ազգովի գլխի ընկանք, որ ավագ եղբայրը խորք է եղել: Մենք հայ քրիստոնյա ենք և միշտ թույլին ենք պաշտպանում և արդարության կողմն ենք: Թվում էր մեր ավագն էլ նույնպիսին պիտի լինի: Բայց ավագը մեզ խաբեց, փորձեց ու դեռ փորձում է աշխարհի համար երեք հազար տարի տներ շինած մի ազգի հավատարեցնել երկվա վաչկատուն ցեղերին»: Լավատես լինենք բանաստեղծի նման ու հպարտ ծայրենք աշխարհով մեկ. «Չէ, այդ չի լինելու, ինչպես առում են, վերևն Աստված կա...» Եկեք հույսներս դնեք Աստծո, և որ նույնն է, ինքներս մեզ վրա, մեր զինվորի ու սեփական բազկի վրա և չկասկածենք մեր կողքից երբեք չբացարկող բանաստեղծի մարգարեական խոսքին: //Մեր հողի վրա մերն ենք լինելու, //Մեր անտեր գլխի տերն ենք լինելու, //Մենք ապրելու ենք, ինչ էլ պատահի: // Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ են սահյանական սրբափեցնող պատվիրանները, և համախմբվելով մեծ մարգարեի գաղափարի շուրջը, մի վերջին ու հուժկու հարվածով պիտի հաստատենք ի վերուստ մեզ տրված տեղը աշխարհի վրա և ի լուր ամենքի հայտարարելով: //Ելիր, անգեմ իմ ժողովուրդ, //... Եվ թող աշխարհն ականց անի, // որ Արցախը ես եմ, Սահյանը ես եմ, ես հայ եմ ... // Վխտում են շուրջը նորից, // Թեզ նորից դիտվ հոտոտում...// Բայց մեկ է, կուլ չես գնա, // Կճմաս նրանց կոկորդոս: //

Երկու տարի առաջ մանկության ընկերը՝ այժմ մոսկվացի անվանի ատանմաբույժ Մելիքսեթ Մելիքյանը, նվիրեց իր 23-ամյա դուստր Լուսին Մելիքյանի ռուսերեն գրված բանաստեղծական ժողովածուն՝ «Սկիզբ» վերնագրով, և նաև խնդրեց հնարավորության դեպքում գտնել թարգմանչի, որ կկարողանա արժանավորինս թարգմանել հայերենով:

Ընթերցեցի գիրքը և զարմացա, որ տակավին երիտասարդ աղջիկը կարողացել էր ռուսերեն դասական ոճով գրված իր ստեղծագործություններում խորաբախանց և նրբին զգացողությամբ արտահայտել իր հարուստ ոգու ընդլուծումները՝ տալով ոգեղենության փայլ և անկրկնելի հմայք: Ներկայացրի Լուսինեի գիրքը Դոնի Ռոստովից ժամանած ընկերոջս՝ թարգմանչի և դրամատուրգ Արա Գևորգյանին, որ վերջերս էր երևանում լույս ընծայել «Երակ աշխարհի պեղծիք» անգլուզական գիրքը իր թարգմանություններով: Գնալվեց Լուսինեի տղերքով և ասաց. «Լուսինե ոչ միայն կարող է լավ տիրապետել ջութակին, այլև ծնվել է դասնալու հայտնի բանաստեղծուհի: Միտքը խորաբախանց է, հոգին՝ հայկական, տղերքը ներծնված են փիլիսոփայական վեհությամբ և կյանքի ընթրտ ընկալումով»:

Անկեղծ ուրախացա նրա խոսքերից, և կարծես մի երանելի միտք փայլատակեց մտքում. «Դե, Արա ջան, միայն դու կարող ես թարգմանել Լուսինեի պոեզիան, քանզի համոզված եմ, որ ռուսերենով գրված նրա խոստովանությունները և բանաստեղծական շռայլ միտքը կարող է ընկալել միայն բանաստեղծական քո տարերքն ու երկար տարիների փորձառությունը՝ հույզերը ռուսերենից փոխադրելու հայերեն, իսկ հայերենից՝ ռուսերեն»: Գնամծայնվեց, և այսօր պատրաստ է հրատարակման Լուսինեի գիրքը՝ արդեն մայրենի լեզվով, և մոտակա ամիսներին հայ ընթերցողը հնարավորություն կունենա ծանոթանալու այդ հիանալի թարգմանություններին:

Մի քանի խոսք Լուսինեի մասին: Այսօր ես համաշխարհային անուն ունեցող ջութակահարուհի է, տվորում է Կանադայի Մակգիլլ համալսարանի սապիրանտուրայում: Գայրենասեր է, աշխարհով մեկ տարածում է պատմական հայրենիքի մշակութային ժառանգությունը, շուտով կավարտի հայկական երամշտության դեբյուտային պլեյդի աշխատանքը: Գնամծեցեր է տվել աշխարհի տարբեր ծայրերում, իսկ 2016թ. սեպտեմբերի 21-ին իր սրղ էլույթով կներկայանա Ելու Յորքի «Քարնեգի հոլ» համերգասրահում, որը մեծ պատիվ է աշխարհի ամեն մի ջութակահարի համար:

Գրում է բանաստեղծություններ հինգ տարեկանից, երեք լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն: Լուսինե Մելիքյանի բանաստեղծական քնարը հարուստ է ոչ միայն զգացմունքային նրբազեղությամբ, այլև ուրույն հայեցողությամբ: Նրա հոգին, բանվելով կյանքի մութ կողմերին, չի հուսահատվում, չի դառնում բացասական բեռնում, այլ գտնում է իր նոր ուղին: Նա ոչ միայն բացահայտում է կյանքի մութ կողմերը, այլև փնտրում է գտնում է այն մաքուրը, այն ընտրանին, որով չափում է իր զգացմունքներն ու անելիքները: Նրա բառերը միաժամանակ և դիպուկ են, և՛ ողբերգական, և՛ դաժան, և՛ ճշմարտախոս:

Այն պահից, երբ դու իմ կողքով անցար, Անցար՝ տուրք տալով քո հավերժ ստին, Կարծես դանակը մխրճվեց սրտիս, Եվ ցավս կրկին իմ մեջ սաստկացավ:

Այն պահից, երբ դու իմ կողքով անցար Եվ ինձ նայելով՝ դու ինձ չտեսար, Ես էլ չեմ նայում դեպի ետ՝ անցյալ՝ Կեղծ մտերմության գինը անտեսած:

Խորաբախանց են և անկրկնելի Լուսինեի ստեղծագործությունները՝ նվիրված սիրո կենսական թրթռներին, նրա շատ գործեր բարբախագիր են կյանքի գարկերակի: Նա, ով ձգտում է դարձնել «կենդանացած ջութակ»՝ աղոթք, նա, ով ձգտում է սահմանել իր համար աշնամային կեսօրվա գաղտնիքները, միաժամանակ գտնում է հոգեհարազատ տղեր՝ ուղղված իր հայ ժողովրդին. «Քեզ, որ մեղքը մեջքին դիպած, դեպիտուրայան երկար տանիքին, նվիրում են սիրտս եթեված, քո աղերսին, առաջապանքին»:

Այսօր, երբ հայության զանգվածները սփռվել են աշխարհով մեկ, մենք պետք է նրանց սիրով և գորովանքով ներհյուսենք նախամայր աշխարհին, և դա ի գորու է անել գեղարվեստական թարգմանությունը: Իմ կարծիքով, Լուսինե Մելիքյանի բանաստեղծությունների թարգմանությունները կդառնան հայ պոեզիայի լավագույն դրսևորումներ, քանզի նա գրում է ռուսերեն, բայց ոգին ու մղունը գուտ հայկական են:

Գրիգոր Գալստյանյան



ՆՈՒՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ ԸԱՅՆՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ

Ես չեմ վախենում ամբոխի մտքից, Գեռու մնալով գովասանքներից, Գերագույն խոսքից և գորշ արարքից Եվ նրանց խորին թամբասանքներից:

Մեծիկան դեմքս թող լինի պայծառ, Թող նա տարբերվի հազար դիմակից, Տիկնիկից անշունչ, քմծիծաղից չար, Անգույն, անհրապույր, առանց եղբայրի...

Չեմ վախենում ես իմ ճանապարհից, Թեկուզ այթաքեն և ցավից տնջամ, Չեր նվճվոցից չեմ զգում կակիժ՝ Դա ծեղ չի օգնի և ոչ մի անգամ...

Եվ չեմ վախենում ամբոխի մտքից, Նրա արգելքին անտարբեր եմ ես, Սակայն ընտրում եմ բազմության միջից Լուսավոր անձանց՝ վեհ ու կարելից:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Իմ աչքերում տանջանքն է քո, Թախիծը քո՝ շուրթերիս, Գյուտերիս մեջ՝ կակիժ դժգոհ, Սպանդի հետքն՝ ուսերիս:

Գայուտի եմ Աստծո կամքով, Թեպետ շուրթս ծյուն է, տես, Մանուկները՝ սահմաններով, Անտառները՝ խոր ու վեհ...

Իմ Արարատ, մեծություն ես, Գզրդ պատմե՛ջ՝ քջճամուր, Պատմությունը, տեսքը՝ մի ծես, Սուրբ կանչ Աստծուն վեհանուն...

Ա՛խ, Գայաստան, հոգիս մոլոր, Սիրտս սեղծվում է մի պահ, Ի՛նչ է սպասում ազգիս բոլոր... Չկտրեն ճյուղս դալար:

ՔՈՂԵՏՔԸ

Իսկ պատերին հետքը մնաց, Շողքը քայլում է ինձ հետ, Որտե՛ր դ ես դու՝ սեյնյակս բաց, Քամին՝ աշնան արահետ...

Իսկ պատերին հետքը մնաց, Գրիչո լուկ՝ սեղանին, Նրանք ասում են. «Նա զնաց, Նա վախճանվեց պատանի»:

Իսկ պատերին հետքը մնաց, Քամին փեղկին է զարկում, Գին ծածկոցը՝ առույց դարձած, Չի տաքացնում տաք հարկում...

Իսկ պատերին հետքը մնաց, Կոշիկները, սանրը՝ փաստ, Եվ պիջակը հետս մնաց, Չկաս, սե՛րս, ե՛րբ կգաս...

Իսկ պատերին հետքը մնաց,

Քիչ առաջ հետս էր կարծես, Ինձ ասում են. «Չկա, զնաց, Եվ աշխարհը թողեց քեզ»:

Քամին ուժգին խփում է, տես, Պատուհանին փաթաթված, Լայլով անշունչ՝ հիշում եմ քեզ, Իսկ պատերին՝ հետքը թաց...

Գիտե՛ս արդյոք՝ կլոնեմ ես, Մեղծ ժպտալով, ինչպես առաջ, Ես կուլ կտամ, ինչ նա պատմեց, Ինչ որ սրտումն է դաքնված:

Գիտե՛ս արդյոք՝ կլոնեմ ես, Ես չեմ սիրում Ֆիլիս, արձուկ, Ես չեմ ուզում պատկանել քեզ Մեծակույսյան մեջ այս տաղտուկ...

Գիտե՛ս արդյոք՝ կլոնեմ ես, Լուրջույնս սարսափելի Չեմ էլ գոյում առաջվա պես, Ինձ հանգստն է պետք ավելի...

ՄԱՅՐԻԿԻՍ

Ասա ինձ, մայրիկ, ինչու՞մն է բանը, Ինչ եմ ես փնտրում և ինչին ձգտում, Քեզ հարց եմ տալիս, քանի որ ծանր է Ինձ հարցախարել թախիժ և անկույն:

Ասա, ինձ, մայրիկ, ինչ ուժ էր, որ մեզ Բաժանեց այսպես և ինչի համար Դու, որ ինձ կյանքի կոչել ես և հեզ Գնամծել աշխարհին ցավով ակամա:

Եվ նպատակով մեծ ու ներդաշնակ Թողեցի ես քեզ, չվեցի հեռու, Ի՛նչ օգուտ մարմնից, երբ հոգի չկա, Եվ հայացքս ներս քեզ եմ սևեռում:

Ճակատանարտ է կյանքը, մենք գինվոր, Որ խաղաղության ելք ենք միշտ փնտրում, Չենքք նետելով հեռանում տկուր, Երբ կյանքը վերջում մահվան է հարում:

Ի՛նչ է կյանքն այստեղ Աստծո խաղալիք, Քմահածություն նրա մեծ կամքի, Ի՞մ ճանման կիսատ, մի փակ բանալի, Բայց հոգնել եմ ես թե՛ դարձած կյանքից:

Բայց ավանդել ես դու ինձ չհանձնվել, Թեկուզ լինի խաչը ծանր՝ դիմանալ, Ոչ քե թողոցի համար եմք ծնվել, Այլ պայքարելու, ապրելու համար:

Ինձ ների՛ր, մայրիկ, որ քեզ հոգնեցրի, Սիրտս լցվում է վշտով բախձագին, Կարտուել եմ քեզ, քեզ ես գրեցի, Որ ասե՛մ սիրում եմ, մայրիկ, իմ անգին:

ՓԱՐԻՉ

Մոնմարտի նրբանցքներով քնած Երբ օդն անշարժ էր կարծես,

Վազում էինք մանկանց պես տարված Գիշերվա Փարիզին ի տես:

Քաղաքը երկնքի տակ քնած, Սակրե-Կյորն է կարծես մի հեքիաթ, Եվ կրծքիս տակ սիրտս թարտաց, Երազ էր, խաթկանց էր անթարթ...

Շնչում էինք թմբի, կախարդանք, Երկուսով, հեռու իրարից, Ճաշակում գույները՝ զմայլանք, Շշուկները, ծայրերն արարիչ...

Արջայադուստր էլ չեմք ինձում Լույսով ներկուսված հրաշք, Մոլին Ռուժը կանչում, գրավում, Մեզ տանում էր աշխարհ առաջ:

Լուսաբաց էր տաճարը սպասում Ջրերի մոտ փռված անվողով, Որ բացեր դռներն իր Աստծուն Լուր-Դանձ էր ամբողջ երկայնքով:

Մեծաստան է, տես, համբառնող, Տաճարն էր իր մտքով սավառնում, Շարիկներ՝ դեպի խորքը տանող, Մտածողն էր երկինք համբառնում:

Դեպի՛նձ մութ հսկա պալատի Որպես զոհ տրված տաղանդին Քմծիծաղ էր ձգվել մեծ պատին, Ջոկոնդան էր տիրում բանկազին:

Երկնքի տակ Փարիզի, կարծես, Կրվեստները՝ շռայլ մի հանգույց, Որչի՛նք խառնած սուրճի հետ Ստիպում էր ժպտալ մեզ «Մայրուտ»:

Մոնմարտի նրբանցքներով սփրթման Երբ օդն անշարժ էր կարծես, Վազում էինք մանկանց պես տարված Գիշերվա Փարիզին ի տես:

Եվ վերջ... Դատարկություն Եվ լռություն է գորշ: Սրտի լուկ ներկայություն,- Շնչում եմ անորոշ:

Դատարկություն: Գիշեր, Կամաց շնչառություն, Չկան արդեն հուշեր, Ոչ ծայր, ոչ էություն:

Դատարկություն լրիվ, Գայացք մի անհամեստ, Նա ինձ չէ՛ ցրիվ Մտքեր, մտքեր, ժամեր...

Եվ վերջ: Դատարկություն Եվ լռություն տկար, Առանց ժիճաղ, արդյունք, Բաժան ենք, հույս չկա...

Ռուսերենից թարգմանեց ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

Վահան Թոփչյանը գրաֆիկը հայտնի է իբրև ինքնատիպ մտածող ու վառ երևակայության ստեղծագործող: Նրա արվեստում ավանդական արժեքները յուրօրինակ կերպով համադրվում են ժամանակակից արտահայտչամեթոդներին: Թոփչյանը ստեղծագործական գործունեություն է ծավալում ինքնաբերական արտահայտչամեթոդով:

Կարելի է ասել, նա ինտելեկտուալ արվեստագետ է ու իր գործի վարպետը: Թոփչյանը գյուլմոտիվային արվեստի ստեղծագործողներից է, որ կոչված է շոշափելու բաղաձայն գաղափարները, լսելու նրա սրտի բաբախը, շնչառությունը, մի փոքր էլ կյանք տալու տկար մարմնին: Նկարչին բնորոշ է սարկաստիկ մտածողությունը, որով նա դիտում է «կյանք» կոչվող ներկայացումը ու թրթին համեմունք մերթ իրոնիկ բնորոշումը, մերթ էլ անգույն քրեքոլով: Վ. Թոփչյանը կյանքն ընկալում է որպես որոշակի մեխանիզմ՝ անհիվանդից, պտուտակներից, հյուղեններից բաղկացած: Դարձել է որևէ միջամտություն՝ գործողության մեջ դնելու այդ բարդ մեխանիզմը: Կյանքը, ըստ Վահան Թոփչյանի, որքան իրական է ու տրամաբանական, նույնքան անիրական է, մտացածին: Այն ավելի շուտ հիշեցնում է արտերդի թատրոն, որտեղ տնօրինում է անհեթեթությունը:


Այս ամենի հանրագումարը 1990-ականների ստեղծագործություններն են, մասնավորապես «Փոքրիկ մարդիկ» շարքը, որը ներկայացնում է հասարակ մարդկանց ուրախությունը, տխրությունը, անհաստ սխաղագործությունը: Փոքրիկ մարդիկ, իրար հորձտելով, փորձում են մազկցել պարիսպը, որի հետևում... ոչինչ չկա: Ազգային բնավորություն... եթե չես կարող ինքդ բարձրանալ, մի՞ թող դա անի արիշը: Բարձրագուծներից մեկը արդեն վայր է գլորվել: Մյուսներին ևս սպառնում է անհաստակ վախճան... Ի՞նչ է հարկավոր փոքր մարդուն երջանկության համար... փոքր-ինչ ոգելից վիճակ

կամ թռչող տապալիկ, սուրճ սարի գազափն, դիոլ ու ակորդեոնի հնչեցրած երաժշտություն: Չկա ոչ մի հոգա ու խնդիր: Կախված հնաստային շեշտադրումից՝ ընդգծված են կերպարների դեմքի և մարմնի որոշակի մասերը՝ չոված աչքեր, սրված ականջներ, զգայալիկ ծնոքներ և այլն: Նման գրոտեսկային մոտեցմամբ Թոփչյանի կերպարները մոտենում են այլընտրանքային իրականության հերոսներին:

Ե կ ա թ ի չ ը միևնույն ժամանակ մնում է զուսպ դիտողի դերում: Նկարներում, որպես կանոն, բացակայում են տարածությունն ու ֆոնը, ինչը հնարավորություն է ընձեռում ուշադրությունը բևեռելու ծավալվող գործողությանը համարելով այն տարածայն ու մշտնջենական: Թրթից պատրաստված «խորտակվող հավի» ճոճվում է խախտ հեմարանի վրա: Անտեսելով մոտալուտ վտանգը նրա ուղևորներից մեկը՝ գիտնականի գլխարկով, կարողում է, մյուսը չեփող է փչում, երրորդը սիրահետում է ազնված տիկնոջը, մեկ ուրիշը՝ փողոցի դրոշմ ծնոքին, ինքնակոչ առաջնորդի է հիշեցնում: Նրանք զբաղված են իրենց փոքրիկ հոգսերով ու չեն նկատում, որ առաջատրի հետևից ինչ-որ մեկը փչում է՝ կործանման տանելով փոքրիկ մակույկը:

Վ. Թոփչյանի պատկերած մարդիկ իրենց կարծում են վիթխարի ու անհասանելի. դա երևում է նրանց կեցվածքից, շարժումներից, դեմքի նշանակալի արտահայտությունից, մինչդեռ նրանք պարզապես խամաճիկ-

ներ են՝ տիկնիկավարի ծեփով դեկավորվող: Դիտելով «Մարիոնետներ» շարքը՝ ակամայից վերհիշում են Պ. Բրեյգելի «Ֆլամանդական ասացվածքներ» կտավը,



Վահան Թոփչյանի փոփոխական աշխարհ

երազմ Բոտերդամցու «Գոլդ հի-մարուքյան» ստեղծագործությունը, դարձազնե ու արտերդի թատրոնը: Հանգստված ես՝ որքան գոյություն ունի մարդ արարածը, նույնքան է՝ հիմարությունը, մեծամտությունն ու տգիտությունը: Այն քայլում է քաղաքներով, ապրում է տարբեր ժամանակներում ու դեկավորում քուրդին... Վահան Թոփչյանի մարիոնետները, ճիշտ է, ծնվել են Գյումրիում XX դարում, սակայն նրանք ապրում են միշտ և ամենուր իրև համամարդկային գոյության առիվախոյա: Անցյալը համատեղվում է ներ-

կային, շարունակում ու վերի-մասավորում նկարչի ինքն-մաները, որոնց հանրագումարն է «Թռչուն, բնապատկեր» շարքը: Այն ցուցադրվել է Գյումրու Gallery-25-ի ցուցասրահում, այնուհետ երևանի «Դավան» ցուցասրահում: Գործերը յուրօրինակ հանրագումարն էին նկարչի նոր տեխնիկական ու բեմատիկ որոնումների: Սեկ խորագրի տակ ներկայացված են երեք տարբեր շարքեր, որոնք օրգանապես շարունակում ու զարգացնում էին նկարչի նախորդ շարքերը՝ «Հետգրություն», «Մարիոնետներ», «Մարդկային կատակերգություն», որոնցում նկարիչը խոսում էր ժամանակի, մարդկային ճակատագրի, հասարակության ու անհատի փոխհարաբերությունների մասին: Այժմ գլխավոր «հերոսը» թռչունն է, որը, «ճախրելով» մեկ կտավից մյուսը, շարքի թուր նկարների տարածությունը լցնում է օդով, լույսով, յուրօրինակ ոգե-

ղենությամբ: Շարքը կատարված է գորշ գույնի թուր երանգներով, որոնք տարբեր լուսավորության տակ ստանում էին նրբերանգներ ու նոր շեշտադրումներ: Դիմելով տարբեր տեխնիկական միջոցների մատիտ, տաշ, ջրաներկ, օֆորտ, նկարիչը գտնում է գրաֆիկական հետաքրքիր լուծումներ: Վերացարկված բնապատկերները «Հետգրություն» շարքի յուրօրինակ զարգացումն են. դրանք նկարիչը ներկայացրել էր 2000 թ. Բիենալեին. վերացարկված պատկերների ֆոնին քեթված են թվեր, անուններ, տառեր, որոնք ասես նշարել են ժամանակի

հետքը՝ դաջվելով հիշողության մեջ: Նոր շարքի բնապատկերները ծերբազատված են թվերից, անուններից, տառերից: Նկարիչը իր «թռչուն» բարձրությունից է դիտարկել նույն տարածքները: Ժամանակը ջնջում է ամեն ինչ, որպեսզի դառնա պարզ թռչունը: Թոփչյանի թռչունն ունի բնավորություն. այն կարող է խորհրդանշել փոփոխություն, շարժում, նորություն, պատրասք և ընկալվել իբրև ինքնաբերական թռչուն: Այստեղ նկարիչը դիմում է մարդու ու թռչնի տարբեր գույնգորակա պատկերների՝ ստեղծելով տիպային, ընդհանրական կերպարներ: Պճմված կինը թռչունն ընկալվում է իբրև ցանկալի նորության բանցր, պատանու ծնոքերում այն վերածվում է աքլորի՝ իբրև տեսալի ինքնահաստատման միջոց, փզված պարոնի կողքին թռչունը աննկատ թշվառ ճնճող է: Չէ՛ որ յուրաքանչյուրը կյանքն ընկալում է սեփական պրիզմայով ու հայեցողությամբ, ինչպես դա անում է գյուլմոտի նկարչի Վահան Թոփչյանը:

Արաք Մարգարյան Արվեստագիտության բեկմամու, դոցենտ

ՀԱՎԿԻ ԶՆՈՒԹՅՈՒՆ

Խրամատները՝ հոսանքագծերի պես սահմանի երկու կողմերով ձգվող, լուռ են. ոչ մի կրակոց: Անորոշություն լցվել, հոսում է առաջնագծի գին՝ վորի երակներով, դարձել սիրտ ծնող անհանգստություն:

Քամու համար ժամ-պատարագ չկա: Այն ամենօրյա ընթացքի մեջ է, մտնում-ելնում է, ուր պատահի, տնտղում հանդիպածին: Խրամատով անցնելիս, սիս, մտերմաբար հպվում է խրամատակողին: «Տեսնես անիրավները ի՞նչ են մտածում, որ պապանծվել են»: Դադրած լռություն: Քամին համառուն է. «Դը», ի՞նչ կասես, ձե՛ն հանի»: Խրամատակողը դժկամությամբ թե՛ «Մի դավ մոզոնում են, որանցից լավ բան մի սպասիր: Հետո էլ ի՞նչ իմանած, հարցրու զինվորին. նա ավելի շատ բան է տեսնում»:

Քամին անմիջապես սահում է դիրքապահ զինվորի սաղավարտի տակ, շրյում մագեր. «Ոնց որ ձեն-ծպտուն չկա»: Ձինվորը հազում է, իբր մի կռվող: Քամին շարունակում է խաղալ զինվորի մագերի հետ. «Անցնում էի կողքովդ, հարցրի ի՞նչ եղավ»: Ձինվորը չորեք. «Ինձնից ձե՛ն բաշի. հեթիսթի յոթ հարյուր երեսուհիններդ գիշերն է: Այս էլ թող այսպես անցնի»:

Քամին նեղացավ. դուր չեկավ զին-

վորի պահվածքը. վերջիվերջ գիշերների արտակից ընկերն է եղել, հազար ու մի ծայն-լուր է տեղ հասցրել. «Է՛, աշխարհ, աշխարհ, տեղը մի փոքր ավազել է, ինձ հետ գլուխ չի դնում», - մտածեց քամին, մի գալար տվեց, գետնից փոշի հանեց ու լցրեց զինվորի պատռված կոշիկների մեջ, ապա հեզ-հանքով նետեց. - վաղը /այդ վաղը այսօր է արդեն/ կիջնես դիրքերից, մյուս օրը քեզ կգորացրես. բա ո՞նց ես սրանով տուն գնալու»:

Ձինվորը առաջին անգամ ուշադրություն դարձրեց այդ իրողությանը: Տխրեց: Քամին չէր հանդարտվում: Նորից ինքեց. «Է՛, հսկական քարված կտրելու գիշեր է: Չե՛նե՛մ անցնե՛մ սահմանը, մի գույգ կոշիկ խլե՛մ ու գա՛մ»: Ու ծիտակեց, զինվորն էլ խնդաց ու նայեց կոշիկներին. «Բախտի հերն անիծե՛մ, սրանք էլ ժամանակ գտան ճղվելու»: Ձինվորի սիրող աջ ու ձախ սկսեց խփվել: Կոշիկ...կոշիկ...կոշիկ... Սորգեի SOS-ի պես սկսեց տկուկալ ուղեղը:

Քամին դարձյալ ծարրեց. -Հայերդ մի հասարակ Լեճին չունեցաք, որ գնալի, մի գույգ կոշիկ խնդրեի ու բերեի տայի: -Լեճին չունե՛ք, ախտեցի Լեճինի ունե՛ք,- իրենից գոհ ժպտաց զինվորը: -Քոռախտեցի: -Հա՛, հա՛, հենց քոռախտեցի:

-Բայց կտա՞, - ծոր տվեց քամին: -Նա քեզ նման քամի չէ, կտա: Կհասնե՛մ տուն, ետ կուղարկե՛մ: -Ինչպե՛ս ես ուղարկելու: -Վախենա՛ս մի բանով չուղարկե՛մ: -Տես, չուղարկեցիր կգամ ձեռ տուն ու կպատմե՛մ, թե ոնց էիր վախեցել, երբ գիշերը կատվին դիվերսանտի հետ էիր շփոթել: Եր անտեր գե՛նքը էլ քեզ դավաճանել էր, չէր կրակել, ու դու, կատվի կողմը այն նետելով, հավար էիր կանել:

-Սկզբում սահմանաշունչը սարսռոջ է: Վախը որ չճանաչես, ո՞նց գզույշ կլինե՛ր: -Հիմա վախենում ես, որ կոշիկ չես ծարրել, չէ՞: -Այդ մեկը չէ: Ես ընկերներ ունե՛մ... Քամին չքվեց: Ձինվորը հանկարծ տեսավ լուսացել է: Արշալույսը մայրական քնքշությամբ ողողեց նրան: Ճակատից թրտիցի կաթիլ գլորվեց աջ աչքի մեջ, աչքը խաղաց, հետո կաթիլը ծանրանալով ընկավ ու պայթեց խրամատի հողին: Բարձրացավ հողի բուրմունքը... Օրեր անց Հայաստանի մի ծայրից մյուսը աշխարհից

աշխարհ, N գորամասի հասցեով մի ծանրոց էր թռչում: Ճանապարհ երկար էր, անցնում էր գեներալների և գեղապետների ապարանքների մոտով: Ծանրոցում մեկ գույգ զինվորական կիսաճիտ կոշիկ էր, քաղցրավենիք, ծխախոտ ու գրություն նախկին դիրքապահի ծնոքով գրված «Ձգույշ կլինե՛ք»:

Ծանրոց



ՇՈՒԲԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Ինչքան էլ փակեն աչքերս,
Սեկ է, մթության մեջ կերեաս,
Ինչքան էլ մտքիս մեջ գետեր
հոսեցնեն,
Սեկ է, մի քար կդիպչի,
Ու էլի կերեաս:

ՀԱՍՄԻԿ

Ինձ մոռացան
ժամանակի փակ էջերում
Չորացած թիթեռի նման,
Բայց ես գալու եմ դեռ
Ապագա օրերի սպասումով:
Ինձ մի մոռացե՛ք
Որպես կանգառում
Չորացած ծառ:

Երբ բաժանումը
Դեմքիդ շրխակացող դուռ է,
Իսկ բառերը
Սրտումդ խրված
տատասկափուշ,
Ծաղիկն է սիրո թառամել,
Այլևս անհնա՛ստ է ներելը:

ԱՆԻ ՄԱՂՈՅԱՆ

Քո այս արև ժայտով
Օրս գարուն է դարձել,
Դեռ չըթնող իրիկունս
Լուսաբաց է թվում ինձ,
Դե ուրեմն, ժպտա՛, բալե՛ս,
Արևը մայր է մտնում...

ՀՐԱՆՈՒՇ

Ինձ հոգեդարձ արեց քար
լուսյան ճիչը,
Տրոփյունը սրտիս զգացվում է
նորից
Եվ չհմացա բնավ՝
Լա՛վ էր արդյոք, թե՛ վատ,
Լեզուս պապանձվել է լուսյան որոտից:

Ես անցնում էի սառցե խութերով,
Հանկարծ դու եկար...
Գարո՛ւնս, որքա՛ն չքնաղ ես դարձել,
Քիչ էր մնում՝ քեզ չճանաչեի:

Ծաղիկների մեջ հասակ եմ առել,
Ծաղիկների պես չեմ բացվել սակայն,
Իմ թերթերը նուրբ միշտ զոց մնացին,
Եվ առեցնե՛րիս սնդուկները չիջան:

ԱՄԱԼՅԱՆ ԿԱՐՅԱՆ

ՊԱՅՇԱՌ ԱՓ

Տարափի՛ր, անձրև,
Ակտի՛ր երակներն հողի-
հիջի՛ր անձուկին, անհայտին-
ժայռ ու հողի երակն է զգում քեզ-

Երկնային քո հեռուներից
տարափի՛ր,
Անապական քո շնչով տարափի՛ր-

Մութ ընդերքի կայծը ցորսանը արթնաց-
րու՛

Իմ ապրեցնող անձրև...

Բայց է իմ պատուհանը
Քո ջրվեժող խոռվի առջև-
Տարափի՛ր...
Կեղևս այնպես զգում է քեզ...

ՏԱՔ ՑԱԿ

Ես այսօր կեղևը պոկված
Ծառի եմ նման,
Տաք է ցավն այս,
Արյունս է խեժ...
Ցավն այս փայլ ունի,
Եվ մշուշի միջից
Գալի՛ս, գալի՛ս եմ
Նորից դեպի քեզ...
Կարծես թոճի՛ր է
իմ մեջ թեժանում...

Մշուշ է...
Դու կաս,
Թևերիդ վրա՛ արկի ցուլեր,
Ծաղկի պես անթառամ,
երգի պես ժպտաղեմ,
Մտքի պես հավերժ դու կաս...
Դու օդն ես, շունչը,
քաղցրության հյուլեն,
ճկուն ես հոգիս
Տաք արցունքի մեջ...
Իմ սրտի արյունից վարդեր,
Վարդեր եմ ահա բերում քեզ:

ՄԱՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իմ չափչփած փողոցներով
հեռուներից երբ գամ,
Քաղեմ փշի ծաղիկ ու մի փունջ երիցուկ,
Կեներեմ հայացքս մայթերի
բալե՛նուն

Ու կմնամ այդպես
օդից կախված մի հյուր...
Բարակ ոտքերն արդեն
խաշամի մեջ՝
Ինձ կկանչեն բարդիները
մեր դռան,
Եվ խորք կնայի Արագածը
հոնքի տակից,
Ես կհանեմ ծակ գրպաններից
ծեռքերս սառած

Ու հայացքի տարողության
պնակով մեկ
Շաղ կտամ կարոտները
կտուրից մեր տան...
Կմնամ անարժազանք
ինչ-որ սին թրթիռներ-
ես կիմանամ,
որ վարում ինձ էլ
դժվար թե սիրեն,
ու կարոտեն նույնիսկ կիսատ
մի ամպի չափ,
ես միշտ կես-կես... մե՛նակ,
բախտի քամուց քշված
խաշամի պես
կզլորվեմ տերև-տերև
անհայտության
ուրիշ փողոցներով,

Մի խոնավ սիրտ-կարոտ գրկած,
փշի ծաղիկ և երիցուկ,
տերևաթափված բարդու
ճյուղավոր հավատն
իրար տալով՝
Անդրաճության մամռոտ
պատերի տակ
թողնեմ հեռացումի փշուրները մաշված
Եվ Ամեն-ը շշուկ-շշուկ
արդթքներից պոկված
մնա օդում մե՛նակ,
մե՛նակ...մե՛նակ-
թե գամ...

ՍՈՅՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սերս լցված է անտառի լույսով,
Քո սիրտը իջավ անտառի վրա
առավոտ լույսով...

Քամին լցվել է մի տեսակ հույսով
կամ քո աչքերից,
կամ էլ չորացած
կարասի արդեն բացված ճաքերից...

Ի՞նչ է իմացել անտառի քամին,
Սրտիս ճաքերից ներս ի՞նչ է տեսել,

Որ ճանկոտում է առավոտ լույսով...

Սիրտս կարոտի կարասից փախավ,
Երկնքի լույսը անցավ իմ սրտով,
Երկնքի լույսը ո՞չ պար է, ո՞չ խաղ,
առավոտ լույսով...

Բերին դատարկին կարասի գինին,
Կարասը գետնին դրին հեռացան,
Բերին իմ սրտի գինին դատարկին,
Սիրտս դատարկվեց առավոտ լույսով...

Սիրտս լցված է անտառի լույսով,
Որսորդը դանդաղ անտառ է մտնում,
Սեր սիրո միջով փամփուշը անցավ,
Ի՞նչ կորցրինք առավոտ լույսով...

ԼՈՒԻՆԵ ԱՂԱՏԱՆՅԱՆ

ՃԵՐՄԱԿ ԱՆՈՒՐՆԵՐ

Երանությունը մեզ արդեն մոտ էր,
Աղավնիների պես կնոջ օճից,
Կենաց արջուրի մեղրն ու կաթն էլ,
Ծործոր կտուցի կարմրած բոցին:

Երանությունը ճիշտ այդքան մոտ էր,
Գլուխ գլխի ու կտուց կտցի չափ,
Տե՛նչանքով, որ հենց հորանցի մութը,
Վայելեն տիրոջ ձեռքի ափը տաք:

Երանությունը մոտ էր արդեն մեզ,
Մնում էր քացել վանդակը հույսի,
Աղավնուն անզամ պիտի ազատես,
Որ սեր քսմսի շքուրմբող, ուսիդ:

Թե երկինք չունի մեկը հոգու մեջ,
Ինչպե՛ս կսիրի աղավնու ճախրը,
Օ՛, ինչ չքնաղ է էգի վայրէջքն ու
Վարուժանի հետ սրբազան խաղը:

Կնոջ օճից զույգ աղավնիները,
Որ սկիզբ են ու վերջ, մայրական տոտեն,
Հավե՛ր՝ թժ միասին, հավե՛ր՝ թժ ես ու Նժ,
Այն երանու պես, որն այնքան մոտ էր...

ԱՆՈՒՇ ՀԵՔԻՄՅԱՆ

ԱՂԱՏԱԳՐՈՒՄ

Պիտի հերքեի գոյությունս
Ու առանց ցնցոտիներս հազնելու
Նետվեի
Ունայնության գիրկը,
Մի վայրենի,
Ողորմելի

Քամի դառնայի:
Ինքս ինձնից
Տրտահարվեի,
Հավվեի:
Ինքս ինձնից
Մաշվեի,
Կաշվե

Թախած դառնայի:
Ինձ նվիրեի
Հեռուներից
Վերևներին:
Արձագանքեի
Իմ հետևի՛ց:
Իմ հետևից
Վազեի,
Հասնեի
Ու սայթաքեի
Իմ վրայից:
Ինքս ինձնից
Փայսչեի,
Ներկվեի
Մերկ պատերին:
Ու թե հանկարծ
Սառն անձրևը
Ջնջեր,
Մաքրեր
Գոյությունս,
Պիտի դողայի
Սառնությունից...

ԹԱՄԱՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

Երբ գիշերը իր
վշեթուն է փակում
Եվ հրաժեշտի
Համբույր է տալիս

Կույս արշալույսին,
Շղարշն է բացվում
Թանձր մթության,
Եվ երգն է լսվում
Փոքրիկ արտույտի
Աղոթքի նման:

ԼԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՈՂԱՐԻ

Հայի հետ եկող, դարերով ապրող,
Դու առնակա՛ն,
Դու հաղթակա՛ն

քաջ Քոչարի:
Ու ուսի տված քաջաց
Ոտքի տակ հողը դղողաց:
Խորհուրդն ես դու
մեր մեծ միասնության,
Դու մեր հայրենի
բերդն ես անասան:
Քոչարի,
Մեր հայրերը քեզ պարեցին՝
Ուսիստակի գլխին պարզած,
Մեր հաղթական որոշի տակ
Ամուր բռնած մեծ Քոչարի:
Եղբայրներս քեզ պարեցին՝
Հարթանակած մեր Շուշիում,
Իսկ թոռներս դեռ պիտ պարեն
Վանում,
Մուշում,
Ալաշկերտում:

ՌՈՋԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԱՐՀԱՄՓՅՈՒՒ ԽԱՂ

Ես ուզում էի
տունտունիկ խաղալ
քեզ հետ, Հայրենիք,
դու շատ խորագար
տունտունիկի մեջ,
հետո գավակներ պահանջեցիր,
քնքուշ սահմաններ,
հաղաքաբուփ զգացումներ,
տունտունիկս
ծաղկեց-ծավալվեց,
քնկավ բակից բակ,
քաղաքից քաղաք,
դարձավ
աշխարհասփյուռ տունտունիկ...
Իսկ ես
բակում մոլորվածի խաղով
տարվեցի խղճո՛ւկ ջրափուսին...



գործ՝ Վահան Թովմյանի

ԱՆՈՎՈՏ ԼՈՒՍՈՒ

Ուշանում ես, առավո՛ւտ, Լույս խնորհմե՛ն, շուտ բացվի՛ր, Արտս մնաց ի՞նձ կարոտ, Ա ըստ ի՛նձ, ոսկով դու լցվի՛ր:

Առավոտ շուտ արտ գնամ, Մաղթեմ արտիս բարի լույս, Ափս ճանձփիս են սպասու՛մ, Շոգից ծարավ ծիլ ու բույս:

Փորեմ կուրծքը սև հողի, Մերնս ցանեմ են հորից, Դողը սիրելը որդու պես ժառանգել էմ ի՛նձ հորից:

Ցորեն ցանեմ կրծքի մեջ Դացս ծնեմ սուրբ հողից, Ուշանում ես, առավո՛ւտ, Լույս ի՛նձ, բացվի՛ր դու հորից:

Աճճրև՛, դու էլ արտավճի՛ր, Թրջի՛ր հողիս կուրծքը սև, Թող չմնա նա ծարավ, Դու էլ ժպտա ջերմ արև:

Լո՛ւյս, խնորհում եմ շուտ բացվի՛ր, Ցանքս կիսատ եմ բողել, Ա՛րտ ի՛նձ, լույսով դու լցվի՛ր, Ծեզին բեզ էմ աղոթել:

ԻՆՉՊԵՍ ՄԱՅՐՍ ԿՈՒՉԵ

Չանցավ կյանքս քնամ, Երգս, գործս մնաց, Թող չափստա մայրս Իր իսկ որդուն ծնամ:

Թող չափստամ ի՞նքս Ի՛նձ իսկ ապրամ կյանքից, Ո՛ւ՛ն բողոքեմ, դիմեմ, Ի՛նձ վիճակված բախտից:

Թող որ ապրեմ այնպես, Ի՛նչպես մայրս կուզե, Դակառակվել Աստծուն, Սինձունյե՛ն է, գուր է:

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՉԱԼԻԲԸ

Կյանքիս ցուրտ օրերն են արդեն, Օր ու ժամ չվում են անդարձ, Աշնան պարզ օրերն է լացուն հետք քամին անձրևոտ ու թաց:

Օրերս տերևների պես Պոկվում են սրտիս ճյուղերից, Ու քշվում, հեռանում ամառս հետևազար քամու հոսքերից:

Միտոս հառաչում է կանաց, Մերկանում ու կուչ է գալիս,

Խենթ քամին անձրևոտ ու թաց, Ծերության գալիքն է լալիս:

Շուտով ցուրտ ծնեմ է գալու, Ես ծյունեմ գլխարկ կղնեմ, Իսկ ջախել մանկության օրերս Երագի նման կցնդեմ:

Հարություն Մարգարյան

Մշակութային լուրեր

Պոեզիայի համաշխարհային օր Գյումրիում

Մարտի 21-ին՝ Պոեզիայի համաշխարհային օրը, գրականության, հատկապես բանաստեղծության սիրահարները եկել էին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոն՝ մի հոգեբերվածք ըմբռնելու հրավերով: Այն, որ Շիրակը ստեղծագործական արարումների ու վեբեմ ներշնչանքի տարածք է, և այստեղ մինչև իսկ օդում ճախրող ամեն մի խոսք կարող է վերածվել բանաստեղծության, վկայվեց թե՛ ջախել ստեղծագործողների, թե՛ միջին սերնդի և թե՛ գրական ավագանու ստեղծագործությունների ընթերցումներով:

Մինչ ցերեկույթի սկսվելը երիտասարդ ստեղծագործողները Գյումրու գեղագիտության կենտրոնի գրական խումբը, առանձին թերթիկներով գրավոր հարցեր ուղղեցին դասիժնուն նստած շիրակցի գրողներին:

«Ո՞րն է բանաստեղծի առաքելությունը, ի՞նչ գործառույթ է վե-

րականված բանաստեղծական խոսքին: Տեքստը կարո՞ղ է փոխել իրականությունը: Ի՞նչ առանձնահատկություններ ունի Շիրակի արդի բանաստեղծությունը: Ինչպե՛ս կցնահատեք ժամանակակից թարգմանական գրականությունը: Չոր խորհուրդը երիտասարդ ստեղծագործողներին» և նմանօրինակ հարցերի պատասխանները, անշուշտ, գրողների մեջքին փորձառության լավագույն խտացումներն էին և գրական պատգամներ նոր սերնդին...

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը բանաստեղծության ընթերցումով ողջունեց գրչընկերներին և Պոեզիայի համաշխարհային օրվա առիթով մաղթեց նրանց ստեղծագործական վայելքին առնչվելու նորամտը հնարավորություններ: Նա մասնավորապես նշեց, որ կրոնաքաղաքական տարբեր գաղափարների շուրջ միավորվելով՝ մարդկությունը հաճախ տարանջատվում է, բաժանվում

խմբերի: Մինչդեռ արվեստը, հատկապես պոեզիան միավորում է մարդկանց, նրանց հոգիներն ու գաղափարները: Այս է պոեզիայի առաքելությունը եւ հասարակական հենցողությունը:

Պոեզիային նվիրված օրվա ընթացքում գրողները Ամայա Կարսյանը, Դասմիկ Մաթևոսյանը, Յուրի Մխիթարյանը, Շնորհիկը և այլք, ոգևորությամբ ընթերցեցին իրենց ստեղծագործություններից, անդրադարձան նաև հայ դասական գրողների գործերին, հուշեր պատմեցին:

Հոգու աշխարհագրության ընդլայնման իմաստով առանձնահատուկ էին համաշխարհային գրականության էջերից կառուցված թարգմանությունները: Բանաստեղծ, թարգմանիչ Արա Արթյանը հատված կարդաց Ուիլյամսի Երգ ինքնության պոեմից (խոսքի տերևներ) ժողովածու) իր թարգմանությամբ: Թարգմանիչ Արա Գևորգյանը, որը հրատարակել է Շիրակի աշխարհի պոեզիան ռուսերենով,

կարդաց Շիրակ Մանուկյանի «Արագած, ծնել ես էլիս բանաստեղծության թարգմանությունը»:

Ներկաները ոգևորությամբ գնահատեցին նաև Գյումրու «Բեռլին» հյուրերի տան «Արտ-բոգեմ» մշակութային կենտրոնի երիտասարդ թարգմանիչներ Լուսինե Փախանյանի և Անի Իզիբյանի գերմաներենից կատարած թարգմանությունները: Նրանք ընթերցեցին Դ. Դեսսեի մի քանի բանաստեղծություններ նաև բնագրի լեզվով:

Գրական ցերեկույթը համակարգող բանաստեղծուհի Ռոզա Դովհաննիսյանն ընդգծեց, որ պոեզիայի միջազգայնացումը նշել առանձին օրով նշանակում է գնահատել ստեղծագործական արարումը և ստեղծագործողին իր խիզախումներով, բարձունքներում երգել կարողանալով...



Ապրիլի 4-ին՝ «Մանկական գրքի շաբաթ»-ի շրջանակներում, Շիրակի մարզային գրադարանում հյուրընկալվել էին շիրակցի մանկագիրներ Ստեփան Միքայելյանը, Սուքիաս Աղալարյանը, Դավիթ Մուշեղ, Շնորհիկ Շահինյանը, Սամվել Մարգարյանը և Դասմիկ Մաթևոսյանը:

Հանդիպումը Գյումրու թիվ 21 դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանի աշակերտների հետ էր: Շիրակի մարզային գրադարանի տնօրեն Վերոնիկա Ամիրջանյանը հանդիպման սկզբում ողջունեց ներկաներին և հրավիրեց ամբիջական երկխոսության:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը ներկայացրեց գրողների ստեղծագործական ուղին՝ կարևորելով նրանց գրական վաստակը:

Երեխաները ջերմորեն արծազանքում էին՝ ունկնդրե-

լով ընթերցված գործերը: Նրանց հարցերին սիրով պատասխանում էին մանկագիրները, երբեմն էլ իրենց հարցերն ուղղելով երեխաներին:

Լավարտի Ա.Կարապետյանը նշեց, որ գրողի համար յուրաքանչյուր հանդիպումն ընթերցողների հետ տոն է, և ցանկալի է, որ այդ տոները հաճախակի լինեն:



20-րդ դարի սկզբներին Թբիլիսիում միաժամանակ լույս է տեսել «Հասկեր» հայկական մանկական պատկերազարդ ամսագիրը: Նույն անունով հետայսու լինելու է ամե-

նայա մանկապատանեկան գրական մրցույթ, ըստ որի՝ կազմվելու է դպրոցահասակ տաղանդաշատ երեխաների «Հասկեր» անթոլոգիան:

«Էդիտ Պրինտ» հրատակչությունը հրատարակել է «Հասկեր» մանկապատանեկան ստեղծագործությունների ժողովածուն, որտեղ ընդգրկված են «Հասկեր-2015» մանկապատանեկան գրական մրցույթին ներկայացված լավագույն ստեղծագործությունները: Հեղինակները Հայաստանի տարբեր շրջաններում ապրող դպրոցականներն են՝ թոթովագիր մանուկներ, նորատի պարունուհիներ ու

պարմանիներ, որոնք իրենց առաջին խոսքն են առում գրականության ասպարեզում: Շիրակի մարզի դպրոցականներից ժողովածուում տեղ են գտել Արթուր Պապոյանի /Գյումրի, թիվ 26 ավագ դպրոց, 6-րդ դաս./, Լյուդմիլա Ներսիսյանի /Նոր Կյանք գյուղի միջն. դպրոց/, Լևոն Դավթյանի /Գյումրի, թիվ 6 հիմնական դպրոց/, Ազատ Դևուժյանի /Գյումրի, թիվ 40 դպրոց, 8-րդ դաս., արժանացել է «Մերմտահատիկ» մրցանակի/, Անի Ղազարյանի /Ղարիջանյանի միջն. դպրոց, 12-րդ դաս., արժանացել է «Ոսկե հասկ» մրցանակի/ ստեղծագործությունները:

Ժողովածուն ուշագրավ ու արժեքավոր է հենց այդ իմաստով: Պարզ ու անպաճույճ գործերի կողքին կան փոքրիկ գոհարներ, բայց թե՛ մեկը, թե՛ մյուսը ընթերցվում են հուզմունքով և հետաքրքրությամբ, քանզի մանկան շուրթերով խոսում է ժյնարությունը: Նախածնունդ խումբն է «Կայարան» գրական ակումբը, «Անդին» ամսագիրը, «Էդիտ Պրինտ» հրատակչությունը: «Կայարան» գրական ակումբի նախագահ, արձակագիր Սուսաննա Հարությունյանը նշել է. «Մրցույթը կդառնա ամենամյա, որովհետև թե՛ երեխաների, թե՛ ռաուցիների շրջանում մեծ ոգևորություն է: Եվ



Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

<p>Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543</p>	<p>տրված է 21.03.2005թ. հետ. (0312) 5 65 97 խմբագրական խորհուրդ Համարի պատասխանատու Ռոզա Դովհաննիսյան</p>	<p>Դամակարգային ձևավորումը՝ «Էլդորադո» Տպագրված է «Գյումրի տպարան» ՏԲԸ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 2 տպագրական մասով</p>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------